USAID
FROM THE AMERICAN PEOPLE

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՆԵՐՔԻՆ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ

ՄԵԹՈԴՈԼՈԳԻԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Աշդարարի՛ր

Սույն ուղեցույցը պատրաստվել է «Ազդարարի՛ր, Հայաստան» ծրագրի շրջանակներում, որն իրականացնում է «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը «Հայաստան Բարեվարքություն» Ծրագրի շրջանակներում՝ Ամերիկայի ժողովրդի առատաձեռն աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) միջոցով: Ուղեցույցի բովանդակության պատասխանատուն «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ն է և պարտադիր չէ, որ այն արտացոլի ԱՄՆ ՄԶԳ կամ Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության տեսակետները:

Ուղեցույցը պատրաստվել է ՀՀ արդարադատության նախարարության կողմից իրականացվող ազդարարման համակարգի համապետական իրազեկման արշավի շրջանակում:

Ուղեցույցը պատրաստել է «Ազդարարի՛ր, Հայաստան» ծրագրի հակակոռուպցիոն փորձագետ, իրավաբան Սյուզաննա Սողոմոնյանը, խորհրդատու՝ Իրավաբանների հայկական ասոցիացիայի նախագահ Կարեն Զադոյան: Ուղեցույցը հաստատվել է ՀՀ արդարադատության նախարարության կողմից:

Ուղեցույցից օգտվելիս պատշաճ հղումը պարտադիր է:

© ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ, 2024

ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 7. գրասենյակ 2

Հեռախոս՝ +37410 540199

Էլ. փոստ՝ info@armla.am

Վեբ կայք՝ https://armla.am/

Բովանդակություն

Հապավումների ցանկ 4

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 5

1. ՏԻՄ-ԵՐՈՒՄ ՆԵՐՔԻՆ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 7

2. ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ 9

3. Ի՞ՆՉ Է ԱԶԴԱՐԱՐՈՒՄԸ 11

4. ՆԵՐՔԻՆ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿԸ ՏԻՄ-ԵՐՈՒՄ 13

5. ԱԶԴԱՐԱՐՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ 26

6. ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱԶԵԿՈՒՄ 33

Հապավումների ցանկ

ԱՄՆ ՄԶԳ	ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալություն
ԵԽ	Եվրոպայի Խորհուրդ
ԵՄ	Եվրոպական Միություն
ԿԿՀ	Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՄԻՊ	Մարդու իրավունքների պաշտպան
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներքին ազդարարման համակարգը հանդիսանում է կարևորագույն գործիք տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) գործունեության արդյունավետության, թափանցիկության և բարեվարքության ապահովման գործում: Այս համակարգի արդյունավետ կառավարումը ՏԻՄ-երին հնարավորություն է տալիս բարելավել ներքին վերահսկողությունն ու ռիսկերի կառավարումը, ժամանակին բացահայտել և արձագանքել հնարավոր խախտումներին, բարձրացնել աշխատակիցների վստահությունն ու նվիրվածությունը, պահպանել և բարելավել ՏԻՄ-ի հեղինակությունը համայնքում, ինչպես նաև ապահովել համապատասխանությունը ՀՀ օրենսդրության պահանջներին: Հայաստանի Հանրապետությունում (ՀՀ) գործում է ազդարարման երեք տեսակ. **ներքին, արտաքին և ազդարարում հանրությանը**: Արտաքին ազդարարման տարբերությունը ներքին ազդարարումից կայանում է նրանում, որ ներքինի դեպքում ենթադրվում է, որ ազդարարողը աշխատում է կամ ծառայություն է մատուցում որևէ կառույցում, իսկ արտաքինի դեպքում՝ նա որևէ ձևով առնչվել է որևէ կառույցի հետ, օրինակ՝ ծառայություն է ստացել այդ կառույցից: Հանրության ազդարարումն իրականացվում է զանգվածային լրատվության միջոցներում կատարված հրապարակումների միջոցով: Ազդարարման տեսակներից յուրաքանչյուրը ունի իր կարգավորումներն ու առանձնահատկությունները:

Սույն ուղեցույցի **նպատակն է** աջակցել ՀՀ ՏԻՄ-երին՝ արդյունավետ կերպով կառավարելու ներքին ազդարարման համակարգերը: Այն մշակվել է՝ հաշվի առնելով ՏԻՄ-երի առանձնահատկությունները, ՀՀ օրենսդրության պահանջները և միջազգային լավագույն փորձը: Այս համատեքստում տեղին է նաև հիշատակել, որ Եվրոպական Միությունը (ԵՄ) ընդունել է Միության օրենսդրության խախտման մասին հաղորդող անձանց պաշտպանության մասին հրահանգ, որի նպատակն է՝ խրախուսել անձանց նախ և առաջ հաղորդել՝ օգտագործելով **ներքին ուղիները** (եղանակները) և զեկուցել իրենց գործատուին, եթե այդ եղանակները հասանելի են և ակնկալվում է, որ դրանք կգործեն պրակտիկայում[1]: Միջազգային ճանաչված լավագույն փորձը նույնպես խրախուսում է

[1] ԵՄ դիրեկտիվ 2019/1937՝ Միության օրենսդրության խախտման մասին հաղորդող անձանց պաշտպանության մասին, բացատրական հուշագիր, կետ 47: Հասանելի է՝ https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:32019L1937 (վերջին այց՝ 30.09.2024թ.-ին):

զարգացնել ներքին հաղորդումների մշակույթը՝ որպես իրատեսական և պրոակտիվ եղանակ ներկայացրած հաղորդումներին արձագանքելու տեսանկյունից։

Ուղեցույցը համապարփակ կերպով ներկայացնում է ներքին ազդարարման համակարգի իրավական հիմքերը, նպատակները և առավելությունները ՏԻՄ-երի համար։ Այն մանրամասնորեն նկարագրում է այդ համակարգի ներդրման և կառավարման գործընթացը, ներառելով գործնական ուղեցույցներ և տեղեկատվություն ազդարարման համակարգի կազմակերպման, ազդարարների պաշտպանության մեխանիզմների և համակարգի արդյունավետության գնահատման մեթոդների վերաբերյալ։ Ուղեցույցը հաշվի է առնում տեղական ինքնակառավարման առանձնահատկությունները և ՀՀ օրենսդրության պահանջները՝ ապահովելով ներքին ազդարարման համակարգի արդյունավետ աշխատանքը ՏԻՄ-երում։

Այս փաստաթուղթը նախատեսված է՝

- Համայնքների ղեկավարների համար՝ որպես ընդհանուր մեթոդոլոգիական ուղեցույց համակարգի ներդրման և կառավարման վերաբերյալ։
- Ազդարարման պատասխանատուների համար՝ որպես մանրամասն աշխատանքային ուղեցույց։
- Համայնքապետարանների աշխատակիցների և համայնքային ծառայողների համար՝ որպես տեղեկատվական աղբյուր։

1. ՏԻՄ-ԵՐՈՒՄ ՆԵՐՔԻՆ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանում 2017 թվականին ներդրված ազդարարման համակարգի նպատակներն են՝

1) բացահայտել կոռուպցիոն բնույթի դեպքերը, շահերի բախման, վարքագծի կանոնների, անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների, հայտարարագրման հետ կապված խախտումները, հանրային շահերին ուղղված այլ վնասները.
2) նվազեցնել և կանխարգելել կոռուպցիան.
3) նպաստել կոռուպցիայի նկատմամբ հասարակական անհանդուրժողական վերաբերմունքի ձևավորմանը:

Սահմանված ընդհանուր նպատակները հիմք ընդունելով և հաշվի առնելով ՏԻՄ-երի առանձնահատկությունները, ՏԻՄ-երի անմիջական կապը համայնքի բնակիչների հետ, կարող ենք առավել կոնկրետացնել և մանրամասնել ՏԻՄ-երում ներքին ազդարարման համակարգի նպատակները:

Ըստ այդ, *ՏԻՄ-երում ներքին ազդարարման համակարգի նպատակներն են* ՝

- **Բացահայտել և կանխել հնարավոր խախտումները և չարաշահումները՝ ներքին համակարգերի և գործիքների միջոցով.**
  - ստեղծել արդյունավետ մեխանիզմներ խախտումների վաղ հայտնաբերման համար,
  - նվազեցնել կոռուպցիոն ռիսկերը և համայնքային միջոցների չարաշահման հնարավորությունները,
  - ապահովել արագ արձագանք հայտնաբերված խնդիրներին,
  - բարելավել ներքին վերահսկողության համակարգերը:

- **Խթանել թափանցիկությունը և հաշվետվողականությունը ՏԻՄ-երում.**
  - ստեղծել բաց և վստահելի միջավայր, որտեղ համայնքային ծառայողները, աշխատակիցները կարող են ազատորեն բարձրաձայնել խախտումների վերաբերյալ հիմնավոր կասկածները,

- խրախուսել պաշտոնատար անձանց և համայնքային ծառայողների պատասխանատու վարքագիծը,
- բարձրացնել հանրության վստահությունը ՏԻՄ-երի նկատմամբ:

- **Պաշտպանել համայնքային շահը և բարելավել ՏԻՄ-երի գործունեությունը.**
  - ապահովել համայնքային ռեսուրսների արդյունավետ և նպատակային օգտագործումը,
  - նպաստել վարքագծի կանոնների և բարեվարքության սկզբունքների պահպանմանը,
  - օգտագործել ազդարարման միջոցով ստացված տեղեկատվությունը՝ բարելավելու ՏԻՄ-երի քաղաքականությունները և ընթացակարգերը,
  - ամրապնդել օրինականության մշակույթը և հակակոռուպցիոն ընկալումը ՏԻՄ-երում:

Ներքին ազդարարման համակարգի առավելությունները ՏԻՄ-երի համար

- **Հանրային ազդանշան բարեվարքության և սոցիալական պատասխանատվության նկատմամբ**

  Ներքին ազդարարման համակարգը ցույց է տալիս ՏԻՄ-ի հանձնառությունը բարեվարքության, թափանցիկության և ռիսկերի կառավարման նկատմամբ: Այն բարձրացնում է քաղաքացիների վստահությունը և խթանում ակտիվ քաղաքացիական մասնակցությունը:

- **Պատասխանատվության կանխարգելում և մեղմացում**

  Համակարգը թույլ է տալիս վաղ փուլում բացահայտել և լուծել խնդիրները՝ նվազեցնելով իրավական ռիսկերը և պատասխանատվության խիստ միջոցների կիրառումը: Այս պրոակտիվ մոտեցումը օգնում է պահպանել ՏԻՄ-ի բարի համբավը:

- **Ֆինանսական կորուստների կանխարգելում և մեղմացում**

Արդյունավետ համակարգը կանխում է համայնքային միջոցների չարաշահումը և նվազեցնում հնարավոր վնասների ռիսկը: Այն նաև հանդիսանում է զսպող մեխանիզմ հետագա խախտումների համար:

- **Համապատասխանության և ռիսկերի կառավարման շարունակական բարելավում**

  Ստացված տեղեկատվությունը օգնում է բարելավել ներքին քաղաքականությունները և ընթացակարգերը: Այն նպաստում է ռիսկերի ավելի արդյունավետ կառավարմանը և թույլ է տալիս արագ արձագանքել նոր մարտահրավերներին:

- **Հեղինակության ամրապնդում**

  Համակարգը պաշտպանում է ՏԻՄ-ի համբավը՝ կանխելով բարեվարքության կամ իրավական խախտումների բացասական ազդեցությունը: Սա նպաստում է նաև աշխատակիցների և համայնքային ծառայողների մասնագիտական պատասխանատվության բարձր մակարդակի պահպանմանը:

- **Կազմակերպչական մշակույթի բարելավում**

  Ներքին ազդարարման համակարգը, հատկապես համայնքի ղեկավար կազմի ակտիվ խրախուսմամբ, ձևավորում է վստահության և հաշվետվողականության մշակույթ ՏԻՄ-ում: Խախտումների մասին հաղորդումների խրախուսումը և դրանց արագ արձագանքը ստեղծում են միջավայր, որտեղ աշխատակիցները գիտակցում են ազդարարման կարևորությունը: Սա բարձրացնում է աշխատանքային արդյունավետությունը և նպաստում որակյալ կադրերի պահպանմանը:

2. ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

ՀՀ օրենսդրություն

ՏԻՄ-երում ներքին ազդարարման համակարգը և դրա ներդրման ու գործարկման գործընթացները ՀՀ-ում կարգավորվում են հետևյալ հիմնական իրավական ակտերով.

- «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենք[2]:
- «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք[3]:
- «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք[4]:
- «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք[5]:
- «Կոռուպցիայի կանխարգելման մասին» ՀՀ օրենք:[6]
- ՀՀ կառավարության 2018 թվականի մարտի 15-ի թիվ 272-Ն որոշումը՝ Ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և ձևակերպման օրինակելի ձևը, ազդարարին տրվող պաշտպանության միջոցների իրականացման ընթացակարգը, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, դրանց ենթակա մարմիններում ազդարարման հաղորդումների վերաբերյալ վիճակագրության վարման կարգը սահմանելու մասին[7]:

Միջազգային իրավական փաստաթղթեր և ստանդարտներ

- Միավորված ազգերի կազմակերպության Կոռուպցիայի դեմ կոնվենցիա (հոդված 8, 4-րդ մաս, հոդված 33)[8]:
- Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի թիվ 2019/1937 հրահանգ՝ ԵՄ իրավունքի խախտումների մասին հաղորդում ներկայացրած անձանց պաշտպանության չափորոշիչների մասին[9]:

---

[2] «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենք: Ընդունվել է 2017 թվականի հունիսի 9-ին: Հասանելի է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=172131 (վերջին այց՝ 30.09.2024թ.-ին):
[3] «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք: Ընդունվել է 2018 թվականի մարտի 23-ին: Հասանելի է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=194977 (վերջին այց՝ 30.09.2024թ.-ին):
[4] «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք: Ընդունվել է 2002 թվականի մայիսի 7-ին: Հասանելի է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=193988 (վերջին այց՝ 30.09.2024թ.-ին):
[5] «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք: Ընդունվել է 2008 թվականի դեկտեմբերի 26-ին: Հասանելի է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=193168 (վերջին այց՝ 30.09.2024թ.-ին):
[6] «Կոռուպցիայի կանխարգելման մասին» ՀՀ օրենք, հոդված 24: Ընդունվել է 2017 թվականի հունիսի 9-ին: Հասանելի է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=192626 (վերջին այց՝ 30.09.2024թ.-ին):
[7] ՀՀ կառավարության 2018 թվականի մարտի 15-ի թիվ 272-Ն որոշումը հասանելի է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=180232 (վերջին այց՝ 30.09.2024թ.-ին):
[8] ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիա: Ընդունվել է 2003 թվականի հոկտեմբերի 31-ին: Հասանելի է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=48021 (վերջին այց՝ 30.09.2024թ.-ին):
[9] ԵՄ գրասենյակ: Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2019 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 2019/1937 հրահանգ՝ ԵՄ-ի իրավունքի խախտումների մասին հաղորդում ներկայացրած անձանց պաշտպանության չափորոշիչների մասին: Հասանելի է՝ https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX:32019L1937 (վերջին այց՝ 30.09.2024թ.-ին):

- Եվրոպայի խորհրդի (ԵԽ) ազդարարների պաշտպանության վերաբերյալ հանձնարարականներ[10]:
- Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության ուղեցույցներ ազդարարների պաշտպանության վերաբերյալ[11]:
- Ստանդարտացման միջազգային կազմակերպության «Ազդարարման կառավարման համակարգեր»-ի վերաբերյալ ուղեցույցներ, ISO 37002:2021[12]:

3. Ի՞ՆՉ Է ԱԶԴԱՐԱՐՈՒՄԸ

«Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) համաձայն՝ **ազդարարումը** ազդարարի կողմից պետական և **տեղական ինքնակառավարման մարմիններում**, ինչպես նաև կազմակերպություններում կոռուպցիոն բնույթի դեպքի կամ շահերի բախման կամ վարքագծի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտման կամ հանրային շահերին ուղղված այլ վնասի կամ դրանց սպառնալիքի վերաբերյալ տեղեկությունների գրավոր կամ բանավոր հաղորդումն է Օրենքով նախատեսված իրավասու անձին կամ մարմին:

Այսպիսով, ազդարարումը նշանակում է՝

---

[10] ԵԽ հանձնարարական CM/Rec(2014)7: Հասանելի է՝ https://rm.coe.int/16807096c7 (վերջին այց՝ 30.09.2024թ.-ին):
Խորհրդարանական վեհաժողովի 2300 (2019) բանաձևը «Ազդարարների պաշտպանության բարելավում Եվրոպայում»: Հասանելի է՝ https://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-XML2HTML-EN.asp?fileid=28150 (վերջին այց՝ 30.09.2024թ.-ին):

[11] Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (2023), Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագիր: Ուղեցույց: էջեր 42-53: Հասանելի է՝ https://www.oecd-ilibrary.org/docserver/2ca61fcd-en.pdf?expires=1728554520&id=id&accname=guest&checksum=F4009A6E23497CCF0ECA45984FE5F023 (վերջին այց՝ 30.09.2024թ.-ին):

[12] Ստանդարտացման միջազգային կազմակերպություն, ISO 37002:2021, Ազդարարման կառավարման համակարգեր՝ Ուղեցույցներ: Հասանելի է՝ https://www.iso.org/standard/65035.html (վերջին այց՝ 30.09.2024թ.-ին):

1. Անձը (ազդարարը) տեղեկություն է հայտնում:
2. Այդ տեղեկությունը վերաբերում է հետևյալ խնդիրներից մեկին կամ մի քանիսին.
    - Կոռուպցիոն դեպք:
    - Շահերի բախում:
    - Վարքագծի կանոնների խախտում:
    - Անհամատեղելիության պահանջների խախտում:
    - Այլ սահմանափակումների խախտում:
    - Հայտարարագրման հետ կապված խախտում:
    - Հանրային շահերին ուղղված այլ վնաս կամ դրա սպառնալիք:
3. Այս խնդիրները կարող են տեղի ունենալ.
    - Պետական մարմիններում:
    - ՏԻՄ:
    - Տարբեր կազմակերպություններում:
4. Տեղեկությունը կարող է փոխանցվել.
    - Գրավոր ձևով:
    - Բանավոր ձևով:
5. Տեղեկությունը հաղորդվում է Օրենքով նախատեսված իրավասու անձի կամ մարմնի:

«Ազդարար» նշանակում է ցանկացած անձ, ով տեղեկատվություն է հաղորդում կամ բացահայտում հանրային շահին սպառնացող կամ վնաս պատճառող դեպքի մասին՝ աշխատանքային հարաբերությունների համատեքստում, լինի դա պետական, թե՝ մասնավոր հատվածում *(աղբյուրը՝ ԵԽ CM/Rec(2014)7 հանձնարարական)*:

4. ՆԵՐՔԻՆ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿԸ ՏԻՄ-ԵՐՈՒՄ

Ի՞նչ ներքին ազդարարումը

Ներքին ազդարարումը գործընթաց է, որի միջոցով ՏԻՄ-ի աշխատակիցը կամ պաշտոնյան (ազդարարը) հաղորդում է տեղեկություններ իր աշխատավայրում տեղի ունեցող հնարավոր խախտումների կամ չարաշահումների մասին: Ազդարարը այս տեղեկությունները փոխանցում է իր անմիջական ղեկավարին, վերադասին կամ հատուկ նշանակված պատասխանատու անձին՝ ՏԻՄ-ի ներսում:

Արտաքին ազդարարման տարբերությունը ներքին ազդարարումից կայանում է նրանում, որ ներքինի դեպքում ենթադրվում է, որ ազդարարողը աշխատում է կամ ծառայություն է մատուցում որյէ կառույցում, իսկ արտաքինի դեպքում՝ նա որյէ ձյով առնչվել է որյէ կառույցի, օրինակ՝ ծառայություն է ստացել այդ կառույցից:

Ինչպե՞ս է ներքին ազդարարումը վերաբերում ՏԻՄ-երին

ՏԻՄ-երի ներքին ազդարարման շրջանակը ներառում է նրանց ղեկավար կազմի, համայնքային ծառայողների կամ այլ աշխատողների գործողությունների վերաբերյալ հաղորդումների ներկայացում[13]: Սա նշանակում է, որ ազդարարման ենթակա հաղորդումներ կարող են ներկայացվել այս անձանց գործունեության մասին: ՏԻՄ-երը պետք է ունենան ներքին ազդարարման համակարգ: Բացի այդ, ՏԻՄ-երում պետք է նշանակվեն և աշխատեն ազդարարման համար պատասխանատու անձինք[14]: Այս նշանակումները տեղի են ունենում համայնքի ղեկավարի իրավական ակտով:

Ներքին ազդարարման համակարգի արդյունավետությունն ապահովելու նպատակով առաջարկվում է, որ համայնքի ղեկավարն ուղղորդի աշխատակիցներին ներկայացնել ազդարարումները անմիջապես նշանակված պատասխանատու անձին: Այս մոտեցումը կարող է ամրագրվել համայնքի ղեկավարի՝ ներքին ազդարարման պատասխանատու նշանակելու որոշման մեջ, հստակ նշելով, որ ազդարարումները պետք է ուղղվեն այդ պատասխանատուին:

---

[13] «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենք, 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ:
[14] ՀՀ կառավարության 2018 թվականի մարտի 15-ի թիվ 272-Ն որոշում, Հավելված N 1, կետ 1:

Ի՞նչ կարելի է հաղորդել (ներքին ազդարարման առարկան)

ՏԻՄ-երում ներքին ազդարարմամբ կարելի է հաղորդել հետևյալ խախտումների մասին՝

- Կոռուպցիոն դեպքեր *(կոռուպցիոն բնույթի դեպք են համարվում ՀՀ քրեական օրենսգրքի 1-ին հավելվածով սահմանված 40-ից ավել կոռուպցիոն հանցանքները)։*
- Շահերի բախում *(օրինակ՝ իրավիճակ, որում համայնքի պաշտոնյայի անձնական շահերը հակասում են կամ կարող են հակասել նրա պաշտոնեական/ծառայողական պարտականություններին՝ խոչընդոտելով դրանց անկողմնակալ և օբյեկտիվ կատարումը)։*
- Վարքագծի կանոնների խախտումներ *(օրինակ՝ արգելված նվերի ընդունում)։*
- Անհամատեղելիության պահանջների խախտումներ *(օրինակ՝ համայնքի պաշտոնյայի կողմից արգելված գործունեությամբ զբաղվելը)։*
- Այլ սահմանափակումների խախտումներ *(օրինակ՝ իր անմիջական ենթակայության տակ աշխատել է իր մերձավոր ազգականը)։*
- Հայտարարագրման հետ կապված խախտումներ *(օրինակ՝ գույքի կամ եկամուտների չհայտարարագրում)։*
- Հանրային շահերին ուղղված ցանկացած այլ վնաս կամ դրա սպառնալիք *(օրինակ՝ ազդարարում է շրջակա միջավայրին հասցված վնասի մասին)։*

Ներքին ազդարարման համակարգը ՏԻՄ-երում ստեղծում է մի միջավայր, որտեղ աշխատակիցները կարող են ապահով կերպով բարձրաձայնել իրենց հիմնավոր կասկածները՝ նպաստելով համայնքի արդյունավետ և օրինական կառավարմանը: Նաև կարևոր է նշել, որ ներքին ազդարարումը չի վերաբերում անձնական բնույթի բողոքներին կամ աշխատանքային վեճերին. դրանք չեն համարվում ազդարարման առարկա:

Ովքե՞ր կարող են ՏԻՄ մակարդակում ներքին ազդարարման միջոցով հաղորդում ներկայացնել

- Համայնքային ծառայողները,
- ՏԻՄ աշխատակիցները,
- ՏԻՄ-ին ծառայություն մատուցող անձինք:

Ո՞ւմ է ներկայացվում ներքին ազդարարումը

Ներքին ազդարարումը սկսում է, երբ աշխատակիցը հաղորդում է ներկայացնում իր անմիջական ղեկավարին կամ նրա վերադասին կամ նրա նկատմամբ վերահսկողություն իրականացնող այլ անձի կամ իրավասու մարմնի ղեկավարի լիազորած անձին: Այսինքն՝ ներքին ազդարարման դեպքում ազդարարն, իր հայեցողությամբ, հաղորդումը ներկայացնում է հետևյալ չորս սուբյեկտներից որևէ մեկին՝

- **իր անմիջական ղեկավարին,**
- **իր անմիջական ղեկավարի վերադասին,**
- **իր անմիջական ղեկավարի նկատմամբ վերահսկողություն իրականացնող այլ անձի,**
- **իրավասու մարմնի ղեկավարի լիազորած անձին:**

Օրինակ, եթե ազդարարումը ներկայացվում է համայնքապետարանների աշխատակազմերում համայնքային ծառայության կրտսեր յ առաջատար խմբի երկրորդ յ երրորդ ենթախմբերի պաշտոններ զբաղեցնող անձանց կողմից, ապա վերջինիս «անմիջական ղեկավար» է, որպես կանոն, հանդիսանում այն «բաժին» տեսակի կառուցվածքային կամ աշխատանքային ստորաբաժանման պետը, որի ենթակայության ներքո է գտնվում ազդարարը: Բացառությամբ Երյանի քաղաքապետարանի, Գյումրու յ Վանաձորի համայնքապետարանների, նշյալ իրավիճակներում «անմիջական ղեկավարի վերադաս» է հանդիսանում աշխատակազմի քարտուղարը, իսկ «անմիջական ղեկավարի նկատմամբ վերահսկողություն իրականացնող այլ անձ» կարող է հանդիսանալ, օրինակ, համայնքապետը յ/կամ համայնքապետի առաջին տեղակալը: Երյանի քաղաքապետարանի, Գյումրու յ Վանաձորի համայնքապետարանների պարագայում՝ գործում է նայ «վարչություն» կառուցվածքային ստորաբաժանումը, հետյաբար այս պարագայում «անմիջական ղեկավարի վերադաս» կհանդիսանա համապատասխան վարչության պետը, իսկ «անմիջական ղեկավարի նկատմամբ վերահսկողություն իրականացնող այլ անձ» կարող է հանդիսանալ, օրինակ, Երյանի քաղաքապետը, Գյումրու յ Վանաձորի համայնքապետերը յ/կամ վերջիններիս՝ տվյալ վարչության աշխատանքների համակարգումն իրականացնող տեղակալը: Վերոնշյալ տրամաբանությունը գործում է նայ համայնքապետարանների աշխատակազմերում համայնքային ծառայության գլխավոր խմբի և առաջատար խմբի առաջին ենթախմբի **պաշտոններ զբաղեցնող համայնքային**

ծառայողների, համայնքային պաշտոններ զբաղեցնող անձանց ֆ համայնքապետարանների աշխատակազմերում քաղաքացիական աշխատանք ֆ տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց կողմից ազդարարելու դեպքում, որտեղ կախված պաշտոնից, կարող են նվազել վերահսկողության ֆ վերադասության օղակները, հետևաբար՝ ազդարարումը ստացող հասցեատերերի շրջանակը:

«Իրավասու մարմնի ղեկավարի լիազորած անձ», որպես կանոն, հանդիսանում է **ազդարարման հարցերով պատասխանատու անձը,** որի անունը, ազգանունը, պաշտոնը, իր հետ կապի միջոցների (փոստային հասցե, հեռախոսահամար, էլեկտրոնային փոստի հասցե) վերաբերյալ տվյալները տեղադրվում են համայնքի պաշտոնական ինտերնետային կայքէջում, իսկ պաշտոնական ինտերնետային կայքի բացակայության դեպքում՝ աշխատողների համար հասանելի վայրում:

Օրենքով նաև սահմանված է, որ եթե ազդարարը հաղորդումն անմիջապես չի ներկայացրել իրավասու մարմնի ղեկավարին կամ նրա լիազորած անձին, ապա այն օղակում գտնվող անձը, ով ստացել է ազդարարումը, պարտավոր է փոխանցել այն մարմնի ղեկավարին կամ նրա լիազորած անձին, որն էլ, իր հերթին, պարտավոր է հաշվառել այն և վարույթ հարուցել: Այստեղ կարևոր է նկատել, որ եթե անգամ ազդարարը հաղորդումը ներկայացրել է վերոնշյալ սուբյեկտային շրջանակից դուրս այլ անձի, վերջինիս վրա ևս տարածվում է մարմնի ղեկավարին կամ նրա լիազորած անձին հաղորդման փոխանցման պարտավորությունը, օրինակ՝ ներկայացվել է այլ բաժնի կամ վարչության պետին:

Ինչպե՞ս է ընթացք տրվում հաղորդմանը, այն ստանալուց հետո

Իրավասու մարմնի ղեկավարը կամ նրա լիազորած անձը, հաղորդումը ստանալուց հետո՝

- ապահովում է հաղորդման անհապաղ, բայց ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում հաշվառումը.
- իր իրավասության շրջանակներում հիմքերի առկայության դեպքում հաղորդման հաշվառման պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում ապահովում է վարույթի հարուցումը.

- ապահովում է հարուցված վարույթի գաղտնիությունը.
- իր իրավասությունների շրջանակներում միջոցներ է ձեռնարկում հաղորդման իսկությունն ստուգելու նպատակով.
- իր իրավասության շրջանակներում հաղորդման իսկությունն ստուգելիս հանցագործության առերևույթ հատկանիշներ հայտնաբերելու դեպքում անհապաղ այդ մասին հայտնում է ՀՀ դատախազություն.
- իր իրավասության շրջանակներում միջոցներ է ձեռնարկում ազդարարներին վնասակար գործողություններից պաշտպանելու, ինչպես նաև վնասակար գործողությունների և դրանց հետևանքների վերացման նպատակով.
- ապահովում է ազդարարի անձնական տվյալների չբացահայտումը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ.
- ազդարարի պահանջով ապահովում է վարույթի ընթացքի և ձեռնարկված միջոցների մասին տեղեկությունների տրամադրումը.
- հնարավորություն է տալիս ազդարարին ներկայացնելու պարզաբանումներ, փաստաթղթեր և դիմումներ:

Եթե իրավասու անձը չի կատարում վերը սահմանված պարտականությունները, ապա վերջինս ենթարկվում է պատասխանատվության:

Ներքին ազդարարման վարույթի առավելագույն ժամկետը սահմանված է 30 օր, որի ավարտին ազդարարը պետք է տեղեկացվի վարույթի արդյունքների մասին: Եթե պարզվի, որ ազդարարը գործել է անբարեխղճորեն[15], նրան տրամադրվող պաշտպանությունը[16] կարող է դադարեցվել: Իսկ եթե ազդարարի գործողությունները պարունակում են հանցագործության հատկանիշներ, դրա մասին պետք է անհապաղ տեղեկացնել դատախազությանը:

Ներքին ազդարարման հաղորդումների հաշվառումը և ձևակերպումն իրականացնում է համայնքի ղեկավարի կողմից համապատասխան իրավական ակտով նշանակված աշխատողը՝ ազդարարման պատասխանատու անձը:

---

[15] Ուղեցույցի հետագա մասերում նշված են այն նախապայմանները, որոնց առկայության դեպքում անձը ենթադրաբար գործել է անբարեխղճորեն:
[16] Ուղեցույցի հետագա մասերում նշված են ազդարարին տրամադրվող պաշտպանության տեսակները և միջոցները:

Ներքին ազդարարման հաղորդումների գրանցամատյանը վարվում է ՀՀ կառավարության 2018 թվականի մարտի 15-ի թիվ 272-Ն որոշման համաձայն։ Դրանում (Ձև 1) արձանագրվում են հետևյալ տեղեկությունները՝

- հաղորդման հաշվառման հերթական համարը.
- հաղորդման ներկայացման օրը, ամիսը, տարեթիվը.
- հաղորդման հաշվառման օրը, ամիսը, տարեթիվը.
- հաղորդումը ներկայացրած անձի անունը, ազգանունը և հայրանունը,
- հաղորդումը ներկայացրած անձի պաշտոնը.
- հաղորդման ներկայացման կարգը՝ բանավոր կամ գրավոր.
- հաղորդմամբ ներկայացված տեղեկության համառոտ բովանդակությունը.
- հաղորդման առնչությամբ օրենքի հիման վրա ձեռնարկված միջոցառումների, ներառյալ պաշտպանության տրամադրված միջոցների ամբողջական նկարագիրը.
- հաղորդման առնչությամբ օրենքի հիման վրա ձեռնարկված միջոցառումների, ներառյալ պաշտպանության միջոցների տրամադրման արդյունքը.
- նշումներ ազդարարին ծանուցելու յուրաքանչյուր դեպքի վերաբերյալ.
- հաղորդում ներկայացրած անձի կողմից լրացուցիչ ներկայացված պարզաբանումների, փաստաթղթերի կամ դիմումների ներկայացման օրը, ամիսը, տարին և համառոտ բովանդակությունը.
- հաղորդում ներկայացրած անձի ստորագրությունը (հնարավորության դեպքում).
- հաղորդման առնչությամբ այլ տեղեկություններ.
- պատասխանատու անձի ստորագրությունը։

Ստորև գծապատկեր 1-ը ներկայացնում է ներքին ազդարարման գործընթացը:

Գծապատկեր 1. Ներքին ազդարարման ընթացակարգը



Իր իրավասությունների շրջանակներում՝ պաշտպանել ազդարարին վնասակար գործողություններից:

Ապահովել վարույթի գաղտնիությունը:

Ապահովել ազդարարի անձնական տվյալների գաղտնիությունը (եթե օրենքով այլ բան նախատեսված չէ):

ՏԻՄ-երում ազդարարման մասով իրավասու մարմինների և անձանց դերերը, իրավասության և պատասխանատվության շրջանակները

1) Համայնքի ղեկավար (որպես իրավասու մարմնի՝ ՏԻՄ-ի ղեկավար)
   - Ապահովում է ներքին ազդարարման համակարգի ներդրումը և արդյունավետ գործունեությունը համայնքում:
   - Նշանակում է ազդարարման պատասխանատու անձին:
   - Ապահովում է ազդարարի պաշտպանությունը և գաղտնիությունը:
   - Անհրաժեշտության դեպքում հարուցում է վարույթ ազդարարման հաղորդման հիման վրա:

- Ձեռնարկում է միջոցներ ազդարարին վնասակար գործողություններից պաշտպանելու նպատակով:
- Հաստատում է ազդարարման պատասխանատուի կողմից վրիպակների ուղղումը:
- Ուղարկում է տարեկան վիճակագրական հաշվետվությունը Մարդու իրավունքների պաշտպանին (ՄԻՊ) մինչև յուրաքանչյուր տարվա մարտի 10-ը:
- Վերահսկում է ներքին ազդարարման գործընթացը:

2) **Լիազորված անձ (ազդարարման պատասխանատու)**
- Ընդունում և գրանցում (հաշվառում) է ազդարարման հաղորդումները:
- Վարում է ներքին ազդարարման հաղորդումների գրանցամատյանները:
- Պահպանում է հաղորդումների գաղտնիությունը:
- Իրականացնում է գրանցամատյաններում վրիպակների ուղղումները՝ ուղղման հատվածում կատարելով գրառում և ստորագրում:
- Պահում է հաղորդմանը վերաբերող բոլոր փաստաթղթերը, իսկ դրանց բնօրինակների՝ օրենքով սահմանված կարգով այլ անձի կամ մարմնի փոխանցելու դեպքերում՝ բնօրինակների պատճենները:
- Պատրաստում է վիճակագրական հաշվետվություններ ազդարարման հաղորդումների վերաբերյալ, այդ թվում տարեկան վիճակագրական հաշվետվությունը:
- Ներքին ազդարարման նկատմամբ իրականացնում է ընդհանուր վերահսկողություն:

3) **Անմիջական ղեկավար և վերադաս մարմին**
- Կարող են ստանալ ներքին ազդարարման հաղորդումներ:
- Պարտավոր են ստացված հաղորդումն անհապաղ փոխանցել իրավասու մարմնի ղեկավարին կամ լիազորված անձին:
- Պահպանում են ազդարարման գաղտնիությունը:

4) **Էթիկայի հանձնաժողով (ՏԻՄ-ում ստեղծված)**
- Քննում և լուծում է **համայնքային ծառայողների** անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների

խախտումների և իրավիճակային շահերի բախման դեպքերի վերաբերյալ դիմումները[17]:

5) **Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (ԿԿՀ)**

- Քննում և լուծում է **համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների** պաշտոն զբաղեցնող անձանց կողմից անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների վերաբերյալ դիմումները:
- **Քննում և լուծում է համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների** պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնների խախտումների և շահերի բախման դեպքերի վերաբերյալ դիմումները:
- Քննում և լուծում է **համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների** պաշտոն զբաղեցնող անձանց, **համայնքային ծառայողների** հայտարարագրմանը և նվերներ ընդունելու սահմանափակումներին առնչվող խախտումների վերաբերյալ գործերը[18]:

6) **ՄԻՊ**

- Հետևում է ՏԻՄ-երի և պաշտոնատար անձանց կողմից ազդարարների իրավունքների և ազատությունների պահպանմանը:
- Քննարկում է ազդարարների և նրանց հետ փոխկապակցված անձանց իրավունքների և ազատությունների խախտման վերաբերյալ հարցերը:
- Դիմում է իրավասու մարմին՝ ազդարարի և նրա հետ փոխկապակցված անձանց նկատմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված հատուկ պաշտպանության միջոցներ կիրառելու համար:
- Դիմում է ՏԻՄ-ին կամ պաշտոնատար անձին՝ առաջարկելով ձեռնարկել ազդարարի խախտված իրավունքների պաշտպանության և վերականգնման ուղղությամբ միջոցառումներ:

---

[17] «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 45:
[18] «Կոռուպցիայի կանխարգելման մասին» ՀՀ օրենք, հոդված 24:

- Ազդարարի կամ նրա փոխկապակցված անձի խնդրանքով խորհրդապահական կարգով տրամադրում է գաղտնի խորհրդատվություն և ներկայացնում անձին իր իրավունքների և ազատությունների պաշտպանության հնարավորությունները:
- Հետևում է պաշտպանական և վերականգնողական միջոցառումների իրականացմանը:
- Իրականացնում է ազդարարների պաշտպանության մեխանիզմների արդյունավետության մոնիթորինգ և գնահատում:
- Հանդես է գալիս ազդարարների պաշտպանության իրականացման վերաբերյալ հրապարակային զեկույցներով:
- Տարեկան հաղորդման շրջանակներում ամփոփում և հրապարակում է ազդարարման հետ կապված հաշվետվությունը և վիճակագրությունը և ապահովում է դրանց հրապարակայնությունը:

Այսպիսով, այն դեպքում եթե անձը (ազդարարը) չի ցանկանում ուղիղ դիմել կամ չունի հնարավորություն ուղիղ դիմելու իրավասու մարմնի ղեկավարին՝ համայնքի ղեկավարին, ապա նա կարող է դիմել տվյալ մարմնի պատասխանատու անձին:

Համայնքի էթիկայի հանձնաժողովը քննում և լուծում է **համայնքային ծառայողների** նկատմամբ **կարգապահական բնույթի խախտումների քննությունը**: Կարգապահական բնույթի խախտումներն են՝ վարքագծի կանոնները չպահպանելը, իրավիճակային շահերի բախման դեպքերը, անհամատեղելիության և այլ սահմանափակումների պահանջների խախտումները:

ԿԿՀ-ը քննում և լուծում է **համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների** կողմից անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների վերաբերյալ դիմումները, վարքագծի կանոնների խախտումների և շահերի բախման դեպքերի վերաբերյալ դիմումները, ինչպես նաև **համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների** պաշտոն զբաղեցնող անձանց, **համայնքային ծառայողների** հայտարարագրմանը և նվերներ ընդունելու սահմանափակումներին առնչվող խախտումների վերաբերյալ գործերը:

Ինչ վերաբերում է **հանրային շահերին ուղղված այլ վնասի կամ դրա սպառնալիքի վերաբերյալ հաղորդումներին**, ապա դրանց քննությունն իրականացնում են իրավասու մարմինները՝ ելնելով հաղորդման մեջ նշված տեղեկատվության բնույթից: Օրինակ, եթե հաղորդումն ուղղված է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների գործընթացին, ապա քննությունը իրականացնում է Շրջակա միջավայրի նախարարության իրավասու մարմինը:

Ազդարարը նաև իրավունք ունի դիմի ՄԻՊ-ին, եթե ցանկանում է ստանալ խորհրդատվություն ազդարարման հետ կապված որևէ հարցի վերաբերյալ: Ընդ որում, այդ խորհրդատվությունը ունենալու է խորհրդապահական բնույթ և ապահովվելու է դրա գաղտնիությունը:

Գծապատկեր 2. Ներքին ազդարարման վարույթների քննություն իրականացնող մարմինները և իրավասության շրջանակները

Համայնքի ղեկավար (Իրավասու մարմնի ղեկավար)	Ապահովում է ազդարարի պաշտպանությունը և **գաղտնիությունը**: **Հարուցում է վարույթ** ազդարարման հաղորդման հիման վրա: Ձեռնարկում է միջոցներ ազդարարին **վնասակար գործողություններից պաշտպանելու նպատակով**:
Համայնքի ազդարարման պատասխանատու անձը	**Գրանցում** է ազդարարման հաղորդումները: Պահպանում է հաղորդումների **գաղտնիությունը:** **Պահում է** հաղորդմանը վերաբերող բոլոր փաստաթղթերը, նախատեսված դեպքերում՝ բնօրինակների պատճենները: Ներքին ազդարարման նկատմամբ **իրականացնում է ընդհանուր վերահսկողություն:**
Անմիջական ղեկավար ֆ վերադաս մարմին	**Կարող են ստանալ** ներքին ազդարարման հաղորդումներ: **Պարտավոր են** ստացված հաղորդումն անհապաղ **փոխանցել** իրավասու մարմնի ղեկավարին կամ լիազորված անձին: **Պահպանում են** ազդարարման գաղտնիությունը:
Էթիկայի հանձնաժողով (Համայնքում ստեղծված)	Քննում և լուծում է **համայնքային ծառայողների նկատմամբ կարգապահական բնույթի խախտումների** քննությունը: Կարգապահական բնույթի խախտումներն են՝ վարքագծի կանոնները չպահպանելը, իրավիճակային շահերի բախման դեպքերը, անհամատեղելիության և այլ սահմանափակումների պահանջների խախտումները:
ԿԿՀ	Քննում և լուծում է **համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների կողմից** անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների վերաբերյալ դիմումները, վարքագծի կանոնների խախտումների և շահերի բախման դեպքերի վերաբերյալ դիմումները, ինչպես նաև **համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց, համայնքային ծառայողների** հայտարարագրմանը և նվերներ ընդունելու սահմանափակումներին առնչվող խախտումների վերաբերյալ գործերը:

ՄԻՊ

Հետևում է ՏԻՄ-երի և պաշտոնատար անձանց կողմից ազդարարների իրավունքների և ազատությունների պահպանմանը:
Քննարկում է ազդարարների և նրանց հետ փոխկապակցված անձանց իրավունքների և ազատությունների խախտման վերաբերյալ հարցերը:
Դիմում է իրավասու մարմին՝ ազդարարի և նրա հետ փոխկապակցված անձանց նկատմամբ **հատուկ պաշտպանության միջոցներ կիրառելու համար:**
Դիմում է ՏԻՄ-ին կամ պաշտոնատար անձին՝ առաջարկելով **ձեռնարկել** ազդարարի խախտված իրավունքների պաշտպանության և վերականգնման ուղղությամբ միջոցառումներ:
Ազդարարի կամ նրա հետ փոխկապակցված անձին **խորհրդապահական կարգով** տրամադրում է գաղտնի **խորհրդատվություն:**
Իրականացնում է ազդարարների պաշտպանության մեխանիզմների **արդյունավետության մոնիթորինգ ֆ գնահատում:**

Այլ իրավասու մարմիններ

Հանրային շահերին ուղղված այլ վնասի կամ դրա սպառնալիքի վերաբերյալ հաղորդումները, ելնելով դրանում առկա տեղեկատվության բնույթից, քննության են առնվում իրավասություն ունեցող մարմինների կողմից:

Անկախ այն հանգամանքից, թե անձը ում է ներկայացրել ներքին ազդարարման հաղորդում, այդ հաղորդումը ստացած անձը պարտավոր է ապահովել ազդարարի անձնական տվյալների գաղտնիությունը, հակառակ պարագայում կենթարկի վարչական կամ քրեական պատասխանատվության:

5. ԱԶԴԱՐԱՐՆԵՐԻ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Ազդարարի և նրա հետ փոխկապակցված անձանց պաշտպանության մեխանիզմները և իրավունքները

Ազդարարն ունի պաշտպանության իրավունք[19]: Ազդարար ֆիզիկական անձին տրվող պաշտպանությունը տարածվում է ազդարար իրավաբանական անձի վրա այնքանով, որքանով այդ պաշտպանությունն իր էությամբ կիրառելի է դրա նկատմամբ: Յուրաքանչյուր պայմանագիր կամ պայմանագրի դրույթ, որը միտված է անձին ազդարարման կամ ազդարարի պաշտպանության իրավունքից զրկելուն կամ այն սահմանափակելուն, առ ոչինչ է:

- **Դատական պաշտպանության իրավունքը և առանձնահատկությունները**

Ազդարարը, որի դեմ ազդարարման հետ կապված ձեռնարկվել է վնասակար գործողություն, ունի դատական պաշտպանության իրավունք: Ազդարարի հետ փոխկապակցված անձը, որի դեմ ազդարարի հետ ունեցած կապի պատճառով ձեռնարկվել է վնասակար գործողություն, ևս ունի դատական պաշտպանության իրավունք: Ազդարարի և նրա հետ փոխկապակցված անձանց դատական պաշտպանությունն իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Այս տեսանկյունից հատկապես կարևորվում է 2022 թվականին կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում հետևյալ դրույթի սահմանումը՝ *«Ազդարարի նկատմամբ ձեռնարկված գործողության կամ անգործության իրավաչափությունն ապացուցելու պարտականությունը կրում է պատասխանողը»*[20]: Միևնույն ժամանակ, այս կարգավորումը վերաբերվում է միայն դատական վարույթներին, հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածը, ինչպես բխում է իր վերնագրից, վերաբերվում է դատական պաշտպանությանը:

---

[19] «Ազդարարման համակարգի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մաս:
[20] «Ազդարարման համակարգի մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մաս:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պարտավոր է ապացուցել իր պահանջների և առարկությունների հիմքում դրված ու գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերը, *«եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենսգրքով կամ այլ օրենքներով»*[21]: Ընդգծված դրույթը, «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի փոփոխված 12-րդ հոդվածի հետ միասին, ազդարարների պաշտպանության վեճերում կդնի ապացուցման բեռը գործատուի վրա: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի ընդհանուր կանոնն այն է, որ ապացուցման բեռը կրում է վարչական մարմինը[22]: Բացառություն է կազմում միայն ճանաչման հայցը այն մասով, երբ որևէ **իրավահարաբերության առկայությունը կամ բացակայությունը** հաստատող փաստերի մասով ապացուցման բեռը կրում է ֆիզիկական կամ իրավաբանական անձը:

Վարչական պաշտպանության իրավունքը և առանձնահատկությունները

Ազդարարը և նրա հետ փոխկապակցված անձը, որի դեմ ազդարարման հետ կապված ձեռնարկվել է վնասակար գործողություն, ունեն նաև վարչական պաշտպանության իրավունք:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն *«անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է՝*

ա) անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում.

բ) վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում»:

Բացի այդ, նշյալ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ վարչական վարույթում գործում է հավաստիության կանխավարկածը, այն է՝ *«Վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացրած տվյալները,*

---

[21] ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք: Ընդունվել է 2018 թվականի փետրվարի 9-ին: Հասանելի է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=180733 (վերջին այց՝ 30.09.2024թ.-ին):

[22] ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք: Ընդունվել է 2013 թվականի դեկտեմբերի 5-ին: Հասանելի է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=180732 (վերջին այց՝ 30.09.2024թ.-ին):

տեղեկությունները համարվում են հավաստի բոլոր դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել»[23]:

- **Ազդարարի անձնական տվյալների գաղտնիության պաշտպանությունը**

Ազդարարն ունի իր անձնական տվյալների գաղտնիության իրավունք, այն է՝ եթե ազդարարը, թեև ներկայանում է, սակայն համաձայնություն չի տալիս իր անձնական տվյալները բացահայտելու վերաբերյալ, ապա մարմինը, որն ստացել է ազդարարի ներկայացրած հաղորդումը, իրավասու չէ բացահայտել ազդարարի անձնական տվյալները: Առանց ազդարարի համաձայնության նրա անձնական տվյալների հրապարակումը կարող է առաջացնել վարչական[24] և քրեական[25] պատասխանատվություն : Ազդարարի անձնական տվյալների վերաբերյալ տեղեկատվությունը կարող են իմանալ միայն իրավասու մարմինը, պատասխանատու անձը, վերադաս մարմինը կամ անմիջական ղեկավարը:

Անկախ այն հանգամանքից, թե անձը ում է ներկայացրել ներքին ազդարարման հաղորդում, այդ հաղորդումը ստացած անձը պարտավոր է ապահովել ազդարարի անձնական տվյալների գաղտնիությունը, հակառակ պարագայում կենթարկի վարչական կամ քրեական պատասխանատվության:

- **Անձնական անվտանգության պաշտպանություն**

Ազդարարը կարող է հատուկ պաշտպանություն ստանալու համար դիմել «իրավասու մարմին», որը պարտավոր է անհապաղ քննարկել դիմումը և կայացնել համապատասխան որոշում: «Իրավասու մարմին» եզրույթը ներառում է բոլոր պետական և

---

[23] «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք: Ընդունվել է 2004 թվականի փետրվարի 18-ին: Հասանելի է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=165294 (վերջին այց՝ 30.09.2024թ.-ին):

[24] «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգիրք: Ընդունվել է 1985 թվականի դեկտեմբերի 6-ին, հոդված 41[5]: Հասանելի է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=185524 (վերջին այց՝ 30.09.2024թ.-ին):

[25] ՀՀ քրեական օրենսգիրք: Ընդունվել է 2021 թվականի մայիսի 5-ին, հոդված 502: Հասանելի է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=181303 (վերջին այց՝ 30.09.2024թ.-ին):

ՏԻՄ մարմիններին և հանրային նշանակության կազմակերպություններին[26]: Նշված որոշումն ուղարկվում է Ոստիկանություն՝ օրենսդրությամբ սահմանված կարգով պաշտպանությունն ապահովելու համար: Ազդարարին հատուկ պաշտպանություն տրամադրելու վերաբերյալ որոշումը ենթակա է կատարման իրավասու պետական մարմինների կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 9-րդ գլխով սահմանված կարգով այնքանով, որքանով իր էությամբ (mutatis mutandis) կիրառելի է: Հատուկ պաշտպանության հետևյալ միջոցներն են[27]՝

- պաշտպանվող անձին մոտենալու կամ նրա հետ շփվելու սահմանափակումը.
- պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող տվյալների գաղտնիացումը.
- պաշտպանվող անձի, նրա բնակարանի և գույքի նկատմամբ հսկողությունը.
- պաշտպանվող անձին անհատական պաշտպանության միջոցի տրամադրումը.
- պաշտպանվող անձին բնակության այլ վայր փոխադրումը.
- պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող փաստաթղթերի փոխարինումը կամ պաշտպանվող անձի արտաքինի փոփոխումը.
- պաշտպանվող անձի աշխատանքի, ծառայության կամ ուսման վայրի փոխումը.
- դատական նիստերի դահլիճից հեռացումը կամ դռնփակ դատական նիստի անցկացումը.
- դատարանում պաշտպանվող անձի հարցաքննությունը հատուկ կարգով:

Վարույթն իրականացնող մարմինը կարող է գրավոր խնդրանքով դիմել ՄԻՊ-ին՝ ազդարարին և նրա հետ փոխկապակցված անձանց նկատմամբ հատուկ պաշտպանության միջոց կիրառելու համար: Վարույթն իրականացնող մարմինը այդ դիմումը ներկայացնում է կա՛մ սեփական նախաձեռնությամբ, կա՛մ ազդարարի դիմումով:

- **Ազդարարման հետ կապված պատասխանատվությունից ազատելը**

Ազդարարը չի կարող ենթարկվել պատասխանատվության ազդարարման համար, բացառությամբ, եթե նրա արարքը պարունակում է հանցակազմ: Օրինակ՝ ներկայացրած հաղորդումը ոչ թե ազդարարում է, այլ սուտ մատնություն[28]:

---

[26] «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մաս:
[27] ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք: Ընդունվել է 2021 թվականի հունիսի 30-ին, հոդված 74: Հասանելի է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=195774 (վերջին այց՝ 30.09.2024թ.-ին):
[28] «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մաս

Աշխատավայրում բոլոր ձևերի վնասակար գործողություններից պաշտպանություն

Ազդարարն ունի վնասակար գործողություններից և դրանց հետևանքներից պաշտպանության իրավունք[29]: **«Վնասակար գործողություն»** եզրույթը ունի բավականաչափ լայն, և միաժամանակ չսահմանափակող սահմանում, որը ներառում է 3 կատեգորիայի վնաս.

Աշխատանքային վնաս՝

- աշխատանքային պայմանագրի լուծում.
- ավելի ցածր պաշտոնի փոխադրում.
- հաստիքի կրճատում.
- աշխատանքային առաջադրանքների չտրամադրում.
- արհեստական հանձնարարականներով կամ առաջադրանքներով ծանրաբեռնում.
- աշխատանքային գործունեությանն անհարկի և ապօրինի միջամտություն.
- խրախուսանքի միջոցների կիրառման մերժում.
- աշխատավարձի կամ պարգևավճարների կրճատում.
- կարգապահական վարույթի հարուցում:

Գույքային վնաս՝

- գույքային վնաս պատճառելը.
- գույքային դրությունը վատթարացնող կամ գույքային կամ այլ առաջխաղացման ակնկալիքները չարդարացնող պատասխանատվության ցանկացած այլ միջոցի ենթարկում:

Այլ վնաս՝

- ազդարարումից հետ պահելուն ուղղված կամ ազդարարման հետ կապված այլ ներգործության միջոցների կիրառում:

Այսպիսով, վնասակար գործողությունը պարունակում է հետևյալ **3 հատկանիշները՝**

- դրսևորվում է գործողությամբ կամ անգործությամբ.
- դրսևորվում է ազդարարի կամ նրա հետ փոխկապակցված անձի հանդեպ.
- գործողության կամ անգործության արդյունքում առաջանում է վնաս:

[29] «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մաս

Ազդարարին վնասակար գործողություններից կամ դրանց հետևանքներից պաշտպանելու նպատակով համայնքի ղեկավարը իր իրավասության շրջանակներում՝

1) ապահովում է տեղեկությունների գաղտնիությունը.
2) ստեղծում է ազդարարի կողմից իր ծառայողական պարտականությունների անարգել իրականացման համար բավարար պայմաններ.
3) ազդարարի գործունեությանն անհարկի և ապօրինի միջամտությունների դեպքում ձեռնարկում է դրանց վերացման ուղղությամբ համապատասխան միջոցներ.
4) իրականացնում է ազդարարի աշխատանքային իրավունքների պաշտպանությունը ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված միջոցներով և կարգով.
5) ձեռնարկում է իրավիճակից բխող՝ ազդարարի պաշտպանությանն ուղղված անհրաժեշտ միջոցներ, այդ թվում՝ ազդարարին տեղափոխում է այլ աշխատասենյակ, ապահովում է ազդարարին արհեստականորեն հանձնարարականներով չծանրաբեռնելը և այլն:

Վնասակար գործողություններից պաշտպանության ենթակա սուբյեկտների շարքին են դասվում նաև **ազդարարի հետ փոխկապակցված անձինք**, եթե հիմնավորվում է, որ ազդարարի հետ ունեցած կապի պատճառով իր դեմ կարող են կատարվել վնասակար գործողություններ: Այդ անձինք են՝ ազդարարի ամուսինը, զավակները, ծնողները, քույրերը և եղբայրները:

Ազդարարման վերաբերյալ խորհրդատվություն ստանալու հնարավորություն

Ազդարարն իրավունք ունի ՄԻՊ-ից ստանալ խորհրդատվական բնույթի գաղտնի խորհրդատվություն և իրավաբանական աջակցություն[30]:

(Ֆինանսական) փոխհատուցման տրամադրման հնարավորություն

Ազդարարն իր իրավունքների պաշտպանությունն իրականացնելիս օգտվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված պաշտպանության միջոցներից: ՀՀ օրենսդրությամբ ազդարարներին առնչվող վնասի փոխհատուցման պահանջ հնարավոր է ներկայացնել ՀՀ քաղաքացիական և աշխատանքային օրենսգրքերով նախատեսված կարգով[31]:

---

[30] «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2.1 մաս:
[31] «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3.1. մաս:

- **Աշխատանքի վերականգնման հնարավորություն**

Թեև ՀՀ աշխատանքային օրենսգիրքը ուղիղ կերպով չի նախատեսում ազդարարի աշխատանքի վերականգնման հնարավորությունը, եթե նա ազատվել է աշխատանքից իրավախախտման մասին ազդարարելու պատճառով, սակայն, ինչպես վերը նշվեց, ազդարարն իր իրավունքների պաշտպանությունն իրականացնելիս օգտվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված պաշտպանության միջոցներից: ՀՀ օրենսդրությամբ ազդարարը աշխատանքի վերականգնման պահանջ կարող է ներկայացնել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 1.1. մասի համաձայն, այն է՝ աշխատողի խախտված իրավունքները վերականգնվում են, եթե պարզվում է, որ *«աշխատանքի պայմանները փոփոխվել են, կամ աշխատողի հետ աշխատանքային հարաբերությունները դադարեցվել են առանց օրինական հիմքերի կամ ՀՀ օրենսդրությամբ կամ գործատուի ներքին կամ անհատական իրավական ակտերով կամ աշխատանքային պայմանագրով սահմանված պահանջների խախտմամբ»*.[32]

Ազդարարի և նրա հետ փոխկապակցված անձանց պարտականությունը

- **Բարեխիղճ լինելու պարտականություն**

Ազդարարն ունի միայն մեկ՝ բարեխիղճ լինելու պարտականություն: Ազդարարը գործում է բարեխղճորեն, եթե ազդարարելու պահին նա կոռուպցիոն բնույթի դեպքի կամ շահերի բախման կամ վարքագծի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտման կամ հանրային շահերին ուղղված այլ վնասի կամ դրանց սպառնալիքի վերաբերյալ ունի կասկածի ողջամիտ հիմքեր, նրա համոզմամբ տեղեկությունը ճշմարտացի է, և եթե նախքան ազդարարումը նա իր իրական հնարավորությունների սահմաններում միջոցներ է ձեռնարկել ստուգելու տեղեկության ճշտությունը և ամբողջականությունը[33]:

Նշյալը պարունակում է երեք նախապայմանի պարտադիր առկայության պահանջ, որոնց համաձայն՝ ազդարարը բարեխիղճ է գործում: Այդ նախապայմաններն են՝

- **ազդարարն ունի իրավախախտման վերաբերյալ կասկածի ողջամիտ հիմքեր.**

---

[32] ՀՀ աշխատանքային օրենսգիրք: Ընդունվել է 2004 թվականի նոյեմբերի 9-ին: Հասանելի է՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=185675 (վերջին այց՝ 30.09.2024թ.-ին):

[33] «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մաս:

- **նրա համոզմամբ տեղեկությունը ճշմարտացի է.**
- **նախքան ազդարարումը նա իր իրական հնարավորությունների սահմաններում միջոցներ է ձեռնարկել ստուգելու տեղեկության ճշտությունը և ամբողջականությունը:**

Սրան զուգահեռ, Օրենքը նաև բացահայտում է, թե երբ է ազդարարը **գործում անբարեխղճորեն:** Ըստ այդմ, ազդարարը գործել է անբարեխղճորեն, եթե առկա է հետևյալ պայմաններից որևէ մեկը՝

- **բացակայում են Օրենքով նախատեսված բարեխղճորեն գործելու հատկանիշները.**
- **ազդարարումը կատարվել է ապօրինի եղանակով, այդ թվում՝ հանցագործության կատարմամբ կամ մարդու սահմանադրական իրավունքների խախտմամբ ձեռք բերված տեղեկությունների հիման վրա.**
- **իր կամ այլ անձի համար պահանջում կամ ստանում է որևէ առավելություն.**
- **այլ անձի վնաս պատճառելու նպատակով դիտավորությամբ հաղորդում է կեղծ տեղեկություններ:**

6. ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱԶԵԿՈՒՄ

Համայնքում ազդարարման ներքին համակարգի մասին արդյունավետ հաղորդակցությունն ու իրազեկումը կառավարման բարելավման բանալին են: Դրանք ստեղծում են թափանցիկ միջավայր, որտեղ յուրաքանչյուր ծառայող, աշխատակից գիտակցում է իր դերը հակակոռուպցիոն պայքարում: Շարունակական դասընթացները և տեղեկատվական նյութերը խրախուսում են էթիկական վարքագիծը և ամրապնդում լավ կառավարումը: Այն օգնում է կանխել խախտումները և լուծել խնդիրները վաղ փուլում: Հաղորդակցությունն ու իրազեկումը կարևոր են օրենսդրական պահանջներին համապատասխանելու և ազդարարների իրավունքները պաշտպանելու համար: Այս գործընթացը նպաստում է համայնքում արդարության ամրապնդմանը և ազդարարի դրական կերպարի ձևավորմանը, ինչպես նաև կոռուպցիայից զերծ միջավայրի ստեղծմանը:

1) **Տեղեկատվության տարածում և իրազեկվածության բարձրացում**

- Մշակել մատչելի տեղեկատվական նյութեր ազդարարման համակարգի, դրա նպատակների և ընթացակարգերի վերաբերյալ:
- Կազմակերպել շարունակական դասընթացներ և սեմինարներ համայնքային ծառայողների և համայնքի աշխատակիցների համար:
- Տեղադրել տեղեկատվական պաստառներ և բրոշյուրներ աշխատավայրում տեսանելի վայրերում:
- Օգտագործել համայնքի պաշտոնական կայքը և սոցիալական մեդիայի հարթակները՝ տեղեկատվություն տարածելու համար:

2) Ղեկավար կազմի հանձնառության ցուցադրում

- Համայնքի ղեկավար կազմի կողմից հրապարակային հայտարարություններ և ուղերձներ ազդարարման կարևորության մասին:
- Ներքին ազդարարման ընթացակարգերի հաստատում և տարածում բոլոր ծառայողների և աշխատակիցների շրջանում:
- Ղեկավար կազմի մասնակցություն իրազեկման միջոցառումներին:
- Օրինակով առաջնորդում՝ ղեկավար կազմի կողմից էթիկական վարքագծի ցուցաբերում:

3) Ընթացակարգերի սահմանում

- Մշակել մանրամասն ուղեցույցներ ազդարարման գործընթացի վերաբերյալ:
- Սահմանել հստակ դերեր և պատասխանատվության շրջանակներ ազդարարման համակարգի վերաբերյալ՝ ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

4) Թափանցիկություն և հետադարձ կապ

- Տրամադրել հետադարձ կապ ազդարարներին՝ իրենց հաղորդումների ընթացքի մասին:
- Հրապարակել հաջողված դեպքերի օրինակներ՝ առանց անձնական տվյալների և նույնականացնող հատկանիշների բացահայտման:

5) Շարունակական բարելավում

- Իրականացնել պարբերական գնահատումներ համակարգի արդյունավետության վերաբերյալ:
- Ստանալ հետադարձ կապ աշխատակիցներից և ծառայություն մատուցող անձանցից:
- Բարելավել պրակտիկան՝ հիմնվելով ստացված փորձի և առաջարկությունների վրա:
- Հետևել օրենսդրական փոփոխություններին և համապատասխանեցնել ազդարարման համակարգը: